# Դաս 18. Ավանդույթներ, ծեսեր, եկեղեցական տոներ (Տյառնընդառաջ, Սուրբ Զատիկ)

*Զատկի ձվի ավանդույթը կարող է նաև ծագած լինել Արևելքում Մեծ պահքի ավարտին նշվող տոնակատարությունից: Ըստ ավանդույթի՝ տանը եղած բոլոր ձվերը մինչև պահքը օգտագործվում էին: Արևելյան քրիստոնեական եկեղեցում Մեծ պահքի ժամանակ չեն ուտում միս, ձու և կաթնամթերք: Քանի որ Մեծ պահքի ընթացքում հավերը շարունակում են ձու ածել, պասի ավարտին սովորականից ավելի շատ պաշար է հավաքվում: Այդ հսկայական պաշարը պետք է արագ ուտել, որպեսզի չփչանա: Եվ քանի որ գալիս է Զատիկը, նշանակում է՝ այդ պաշարի սպառումն ապահովված է:*